Մեծ երազ՝ սնանկ առեւտուր:

Բեմադարդական չինծու ալիքների նման նախադասութիւնները մեքենաբար ոլորւում են, բարձրանում, փոթորիկ ձեւացնում ու մի կողմ նետւում: Փուչի եւ թանձրաքարտ:

Ողբերգութիւնը ձայնը ուռեցնում է, կեղծ դասական դերասանի նման մեծ ժեստեր է անում, չափազանցուած խօսքեր է ասում, մինչ իրականութեան մէջ սիրտը պարապ է, ուղեղը ձանձրոյթի եւ ճարպի մէջ անհետացել է եւ մինակութիւնը կրծում է էութիւնը:

Դեռ երէկ մեծ երեւցող գաղափարները, այսօր չնչին գիտակցութիւնների խոնաւ անկիւնում մգլոտել են:

Աշխարհը տակնուվրայ անող մեծաբարբառ նշանաբանները քարշ են գալիս աղքատիկ Հայաստանում ու ոչխարի բառաչի նման կորչում:

Յեղափոխութիւնը փոքրիկ խանութ է բաց արել:

Ապրե՛լ, ապրե՛լ:

Եւ ի՛նչ դաժան կեանք:

Չեզոքների առջեւ գայլի ձեւեր առնող այդ խեղճութիւնները հացի եւ պաշտօնի շուրջը պտտում են գարնանային արու կատուների նման: Ծուայտ նայուածքներով, մազերը դուրս տնկուած, անքուն:

Հիներից ոմանք, նրանք, որ իսկապէս հաւատացել են եւ ամէն ինչ զոհել՝ գայրոյթը մելամաղձութեան են փոխում եւ մի մի Համլետ՝ սպասում են ներկայացման վերջին արարին:

Սակայն, Գիլտերշտէյն եւ Ռոզենկրանցները, լեզուները դուրս հանած, վազում են, փսփսում, նախանձում, դաւում: Հողաթափները ձեռքերին, ամբոխի առջեւ կատակերգութիւն են անում: Կատակերգութիւն են անում եւ գայրանում, չարանում, թոյն ու մաղձ թափում:

Հայ իրականութեան մերկութիւնը ոչինչ չի ծածկում: Ժայռերի նման ամէն ինչ ցցուած է: Ամէն ինչ լերկ է ու պարզ: Արարատի շուքը երբեք չի ընկնում դաշտի վրայ, խորհրդաւոր անկիւններ չի ստեղծում: Բաց գիրք է, երկաթագիր տառերով տպուած:

Ֆրեօյդեան, յետ մղուած կիրքերը եւ ապրելու անյագ տենչը դուրս էր յորդել յեղափոխութեան արիւն եւ կրակի մէջ: Այսօր, բախուել է պարապին, վերադարձել սեռային օրգանների խաւար ենթագիտակցութեան մէջ, բոյն կազմել փչացած ստամոքսների շուրջը, քանդել ջղային սիստեմը եւ օձ դարձել թուլացած ողնաշարի վրայ:

Ուզում են ապրել եւ չե՛ն ապրում, վայելել եւ չեն վայելում:

Գո՛նէ տիրել:

Տիրե՛լ:

Ընդհանուր մեռածութեան սոսկումից բռնուած, նրանք իրենց ձեւացնում են սուր զգացումների տէր, ջղագրգռօրէն կրքոտ եւ յաւիտենապէս ըմբոստ: Պառաւ կանանց նման, որ սէր եւ երիտասարդութիւն են խաղում: Սակայն, ամէն մէկը գիտէ, որ հիւանդագին այդ տենչը ծանր երազ է, որ չափազանցուած այդ զգացումները իրական չեն, որ մեքենաբար կրկնուած գաղափարները հարազատ չեն, որ արտաքնապէս ցոյց տրուած ջղայնութիւնը իսկական գրգիռներ չեն, այլ մի տեսակ հաշիշ՝ երեւակայական:

Եւ որովհետեւ այդ գիտեն՝ դժբախտ են եւ չար:

Հիւանդանոցային այդ մտադարութիւնը մտն է գալիս փողոցներում, վառվռուն բիբեր ոլորում սենեակներից ներս, սրտերի վրայ ժանգոտած դանակ սրում, յոյզեր սղոցում, մտքեր տաշում եւ փոքրոգի բռնակալութեան մաղախեան գինիով հարբում:

Կարմրաբարին ապագայ Երուսաղէմը՝ ծուխ է:

Ծուխ է եւ ներկան: Անկայուն, փոքրիկ, ամենօրեայ վաճառք: Հեղնութիւն, նախանձ, սուտ եւ կեղծաւորութիւն:

* * *

— Դա ի՛նչ սրիկայութիւն է,— ասում է ծերունի կուսակցականը,— դա ի՛նչ աշխարհ է...

— Ի՞նչ է եղել որ:

— Երէկ քեզ հետ սրճարանում նստած ժամանակ, պետական թերթի գէր ու կարճ խմբագիրը լսել է մեր խօսակցութիւնը եւ մատնել: Այսօր Երեւանեան կոմիտէի լակոտները կանչել են եւ հազար ու մի պատմութիւն... Եղբայր, ընկել ենք մի քանի սրիկաների ձեռ-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան